ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ”Գանձապետական համակարգի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանի պահանջները

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի 2011թ տարեկան ծրագրին համապատասխան “Ճամբարակի N 3 միջնակարգ դպրոց” պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական գործառույթների ներքին աուդիտ անցկացնելու նպատակով ստեղծել աուդիտորական խումբ հետևյալ կազմով՝

Ղուլոյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի գլխավոր աուդիտոր

Պողոսյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏԶ վարչության գլխավոր
մասնագետ

Թիզյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության գլխավոր
մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աուդիտորական խմբի մեջ ներգրավել համապատասխան մասնագետների և փորձագետների:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ